

ՄԱՍԻՆ

ՐՈՎ Ա Ն Գ Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ն

Ծառ ըմբռնում (Գրական տեսութիւն) ՄԷՐՈՒՏԷՍ : — Ծաղկիկի Արքին (Նորավեպ) ՅՈՎ ՀԱՆ. ՆԷՍ ՍԵԹՅԱՆ : — Թրբուսման (Սիրելի) բարգ. Ե. Գ. : — Լա Փիսածառ (Ուղեորական տպա- տրութիւն) ԱՐՔ. ՏԷՐ. ՅԱ. ԿՈՐԵԱՆ : — Երեւ սարի Արժանքի մէջ (Քերթոյն) : — Յուսանար :

Ծ ՈՒ Ռ Ը Ս Բ Ա Ն ՈՒ Ս

Գրականութեան շրջանակին մէջ ինչո՞ք բազմաթիւ սխալ ըմբռնումներու վրայ հաստիճան մըն ալ սկսած է բարդուիլ մասնաւորաբար քննի մը ասորիէ ի վեր : — Ֆրանսական գրականութիւնը անպէտ է, Ֆրանսական գրականութիւնը օգուտ մը չէ՛ ունեցած, Ֆրանսական գրականութիւնը պէտք չէ՛ գոյիլ . . . սրովհետեւ գովասանքի արժանի բան մը չէ արտադրած : Որովհետեւ այդ գրականութեան ամէնէն նշանաւոր դէմքերը, հին ատեններէն սկսեալ մինչև այսօր, բոլորովին պարապ մարդիկ եղած են : — Երկու երեք տարիէ ի վեր, քիչ մը ամէն մարդ, երէկուան զբոսայգիներէն մինչև առեւտրական անյաջողութեան մը պատճառաւ փակեղջ գլուխը դնող տէրաւէրը, այս կոտորակուր տեսութիւնները կը պարզին թերթիբուն մէջ : Ինչ որ Ֆրանսական գրականութեան կը պատկանի, շնտաակար է, կը պտանն, աղտոտ է, անօգուտ է : Ֆրանսացի գրող մը, այդ գրողը բլլայ Օկիւսթ Գոնի մը, Լիթթէ մը, Ռեյնան մը, Չլալ մը, եւ կամ ուրիշ ո՛ր է մէկը, իրենց աչքին գլուխեան իրաւունք չունի . կամ անբարոյ յական է, կ'ըսեն, կամ գայթակղութիւն կը պատճառէ, կամ ուրիշ մարդ մըն է, վերջապէս ինչ որ կարելի է երեւակայիլ զատողութիւններու այդ շնտաարիկ շարքին մէջ :

Զպիտի ուզէ՛ք ընաւ գրադիլ ա՛յս աստիճան անհիմն ու անհիթիթ տեսութիւններով,

եթէ երբեք ատողք իրապէս արմատ բռնած չըլլային այն սերունդին մէջ՝ որ նոր կը սկսի ծիլ տալ, թերի զարգացման տէր ժողովուրդներու մէջ, — ինչպէս է մերինը, — ամէնէն անհիմն կարծիքներն իսկ որոշ արձագանգ մը կը գտնեն, ու տակաւ ցեղային ընդհանուր ըմբռնում մը կ'անդամանքը կը ստանան : Նախապաշարունակութեւ պէս են՝ ատողք . օր մը ծայր կ'աննեն բոլորովին աննշան ենթադրուած անկիւնէ մը, եւ ահա շատ շանցած, կը տեսնես որ արդէն իսկ չէնք շնորհք երակաւորուելի են ամէն կողմ : Այս պատճառաւ՝ միշտ պէտք է հակադիւր բոլոր այդ ծուռ ըմբռնումներուն, բոլոր այդ սխալ զատողութեանց կը պատկանի : Որովհետեւ գրականութեան մէջ սխալ համոզում մը աւանդութեան մը չափ զորուոր արմատ կը բռնէ միշտ . նոր թեւ առնող գրական սերունդը՝ տակաւին իսկ մտքի, ու շա՛տ ալ ստանձանափակ ծանթութեանց տէր, ճակատագրականութիւնը կը ձգտի իւրացնել իրմէ առէ՛ր սերունդին կողմէ յայտնուած կարծիքները, զատողութեանց կերպերը . իր սգիտութեան, անփորձութեան պատճառաւ չի կրնար գոնէ ընտրանքով կատարել այդ իւրացումը, գոնէ իր ընդօրինակութեանց մէջ ճիշդին, գեղեցիկին կատարիլ . եւ եթէ ծուռ ըմբռնում մը բլլայ իւրացուցածը, ալ դուք մասածիքք թէ արդիւնքը ի՛նչ կրնայ ըլլալ :

Այդ կարգի մտածումէ մը զորքուած , պէտք կը տեսնեմ հոս պարզելու կարգ մը նկատումներ ֆրանսական գրականութեան եւ մեր գրականութեան միջեւ գոյութիւն ունեցող կապերուն նկատմամբ , ինչ որ պարտականութեան պէս բան մը կ'երեւայ ինձի :

Ինչո՞ւ ֆրանսական միտքն ու բարքերը այս աստիճան զգալի ազդեցութիւն մը ըրած ըլլան Պոլսահայ համայնքին վրայ , կ'ըսեն բոլոր սնո՞ք՝ որոնք այդ ծուռ ըմբռնումին կառչած են : Այդ ազդեցութիւնը պարզապէս անըմբռնելի , անիրատու կ'երեւայ իրենց , ու թերեւս այդ իսկ է պատճառը բոլոր այն անհեթեթ քարոզներուն՝ զորս մեր զլլունն կը կարդան , ֆրանսական գրականութեամբ ու բարքերով խմորուած ըլլալնուս համար :

Ատոնք չեն մտածեր սակայն թէ Պոլսահայ համայնքը ճակատագրականօրէն պիտի եկի՞րկուէր այդ ազդեցութեան , թէ իրեն համար բոլորովին անիրատուփելի բան մըն էր ատիկա : Մարդիկը որոնք եօթանասնական թուականներուն հիմը դրին մեր աշխարհաբար , — այսինքն ժողովրդեան մտաչելի , — գրականութեան , մարդիկը որոնք Պոլսահայոց զարգացման առաջին աղբիւրները եղան , դրեթէ առանց բացատրութեան Ֆրանսա կըրթուած էին : Օսեան , Ռուսիան , Միսաքեան , Իւթիւճեան , Զօրայեան , վերջապէս այդ թուականներուն ապրող բոլոր ցայտուն դէմքերը՝ որոնք տարածուն ու նշանակելի դեր մը ունեցան համայնքին զարգացման մէջ , ֆրանսական միտքով սնան : Անոնցմէ առաջ իսկ , արքունի ծառայութեան մէջ գտնուող ուրիշ ո՛չ նուազ ցայտուն դէմքեր , որոնք արդար հոչակ մը շահած են , զէպի Ֆրանսա ու զեւորած էին , կայս. կառավարութեան նպաստով , կատարելագործուելու եւ Պոլիս վերադառնալու համար : Երկրին մէջ սովէնէն աւելի տարածուած եւրոպական լեզուն՝ ֆրանսերէնն էր , եւ այն բարեկամական սերտ կապը՝ որ , ինչպէս այժմ , իրարու կը զօդէր Օսմանեան Կայսրութիւնն ու Ֆրանսական կառավարութիւնը , ա՛յ աւելի ընդհանուրին ուշադրութիւնը կը դարձնէր զէպի

Ֆրանսական ազգը , որ այդ ասեմներուն մանաւանդ արդէն իսկ շատ նշանակելի դիրք մը գրաւած էր բովանդակ Եւրոպայի մէջ :

Ի՞նչպի Ֆրանսա դարձած այդ ընդհանուր ուշադրութեան անմասն չէր կրնար մնալ անշուշտ Պոլսահայ համայնքն ալ : Այդպէսով է որ ծնողքենի տակաւ կրթութեան կեդրոնի մը գաղափարը կազմեցին Բարիդի նկատմամբ , — գաղափար մը՝ որ կ'արձուածին չափ սխալ ալ չի կրնար նկատուիլ այդ ասեմներուն համար , — եւ իրենց զաւկըներուն զարգացման գործը վստահեցան ֆրանսական վարժարաններու : Այդ ասեմի ծանօթ դէմքերուն , գորղներուն Ֆրանսայի մէջ կրթուիլը պարզապէս արդիւնքն է այդ համոզման , որ սնկախորտ մնաց տարիներ ու տարիներ . եւ անոնք որ Ֆրանսա ուսնելու գայած էին , իրենց վերադարձին ա՛յ աւելի ամբար , ա՛յ աւելի անվկանդ հանգամանք մը տուին այդ համոզման : Ֆրանսայի մէջ , ֆրանսական ոգեւով ու բարքերով սնած , բնականաբար տարբեր բան մը չպիտի կրնային ընել :

Ժամանակ ետքը , ուրիշ աւելի էական պարագայ մըն ալ նպաստեց այդ ազդեցութեան ծաւալմանը : Համայնքին զարգացման այդ առաջին քայլերուն , եւրոպական միակ լեզուն որ պարտաւորիչի պէս բան մը դարձած էր մեր վարժարաններուն մէջ , ֆրանսերէնն էր . միւս կողմէ՝ սենեւոր առեւերու մէջ , միշտ այդ լեզուն է որ ազոց կ'աւանդուէր յատկապէս վարձուած ֆրանսացի եւ կամ քիչ շատ ֆրանսերէն գիտցող հայ զաստիարակներու միջոցաւ : Ամբողջ սերունդ մը այդ կերպով դաստիարակուեցաւ , ամբողջ սերունդ մը ֆրանսերէնով կազմուեցաւ . զարգացման մէջմտները , այխարհաճանաչութեան եղանակը , կեանքի եւ իրերու ըմբռնումը , վերջապէս ամէն բան զուտ ֆրանսական էր այդ սերունդին քով : Ֆրանսերէնէն զատ ուրիշ եւրոպական լեզու չգիտնուուն , մի միայն ֆրանսական գրականութեան ծանօթացաւ ու ի՞նչ երբեք կրցաւ քիչ շատ գաղափար կազմել եւրոպական ուրիշ ազգերու գրականութեան ու բարքերուն նկատմամբ : Ինչ ֆրանսական աղբիւրի մը միջոցաւ էր :

Արդ, ինչպէ՛ս կ'ուզուի որ այդ պայմաններուն մէջ կ'ազմուած սերունդ մը զերծ մնար ֆրանսական գրականութեան ազդեցութենէն : Արդէն ուսմանի՞ք գրականութեան հսկայ ծաւայման ատեններն էր . շիւկոյի անունը բերնէ բերան կը պտուաքէր ամէն տեղ, իր գործերը կը թարգմանուէին բոլոր քաղաքակրթ չազերու կողմէ . հոսանքը, որ օրի անընկճելի հանդամանք մը կը ստանար, եւ իրեն հետ կ'առնէր կը տանէր բովանդակ աշխարհի գրականութիւնները : Բացարձակապէս անկարելի էր որ մերիններն ալ չբռնուէին այդ հոսանքէն . նոր, առոյգ, գրաբարին խորթութիւններէն զերծ ու մանաւանդ ժողովրդին հասկերու լեզուի մը հիմերը զրուած էին : Գիրքներ, հանդէսներ կը ծնէին զրուանակ, ամէնքն ալ նոր լեզուով . աշխարհաբար գրելը օրուան փառքը զարձած էր, փառք մը որ աւելի ետքերը բոլորովին նուիրագործուեցաւ Մասխի մէջ մղուած «Լեզուապայքար»ին շնորհիւ : Պէտք էր գործածել այդ լեզուն, պէտք էր արտադրել այդ լեզուով, քանի որ մանաւանդ ամբողջ գրականութիւն մը, — ֆրանսականը, — իբր օրինակ կ'եցած էր մէջտեղ :

Եւ ահա ծայր առաւ Բաւարիչի գրականութիւն մը, որ միահողմն ամբողջ սերունդի մը կողմէ սկսուած ըլլաւին համար, թիչ տանեուն մէջ կատարելապէս տարածուեցաւ բովանդակ համայնքին մէջ : Փրանսական գրականութեան բոլոր սեպերը փորձուեցան յաջողաբար . — վէպ, թատրոն, ֆանթէզի, իմաստասիրական հատուածներ, արձակ քերթուած, նամականի, զրոյց, քննադատութիւն, ճամբորդութեան նկարագրութիւն, վերջապէս ամէն բան : Միեւնոյնը նաեւ օտանտորին համար : Մէկ խօսքով, Ֆրանսական գրականութեան ստացած բոլոր երեսույթները օրը օրին իրենց հայացի նմանողութիւնը կ'առնէնային մեր թերթիերուն մէջ : Միքիլները ո՛չ թէ միայն գրելու կերպն ու ոգին կ'իրայնէին, այլ նաեւ գրքերու կամ յօդուածներու վերնագիրները : Ամէն օր շնչալիք նորութիւն մը կը ներմուծուէր մեր գրականութեան մէջ, շատ հեղ բոլորովին սխալ հասկացում, բոլորովին պէշ ներկայացուած : Գրեթէ միեւնոյն ատեն

սկսած էին նաեւ թարգմանութիւնները, նախ ամենչան, անկարեւոր գործեր, յետոյ հոյակապ երկասիրութիւններ, գեղեցիկ հատուածներ, բանաստեղծութիւններ, թարգմանութիւններ, վէպեր, եւայլն : Թերթերն ալ, հանդէսներն ալ միշտ ֆրանսականին վրայ ձեռուած, անոնց ուզողութեան կը հետեւէին անխտիր :

Ժողովուրդը համակրեցաւ այդ գրականութեան, Ո՛չ թէ միայն լեզուն հաճելի, մտայնիլ էր իրեն, այլ հրատարակուած հատուածները, թարգմանուած գործերը նոր բաներ էին իր աչքին, բոլորովին հետու նախնի պատուելիական ճոռուաբանութիւններէն : Եւ ե՛րբ արդէն նորութիւնը, մանաւանդ գրականութեան մէջ, հրատարակչէ եղած : Միւս կողմէ, յաջորդող սերունդներն ալ, ինքնին միշտ ֆրանսերէն միայն ուսած, գրեթէ առանց զգալու այդ հոսանքին խառնուեցան, ընդօրինակեցին իրենց նախորդներուն ուղղութիւնը, նոյն իսկ գանոնք գերազանցելով : Տարբեր համեմատութեամբ մը՝ նմանօրինակ հոսանք մըն ալ թիւն կու տար մեր բարքերուն մէջ . թարգմանուած վէպերը, քաւարիչի եղած հատուածները, աւելի պատշաճ, աւելի սեթեւեթեալ ու մեծվայելուչ բարքեր կը պարզէին մերիններուն աչքին : Անոնք որ Ֆրանսայի մէջ ունեւիլ վերջ Պոլսո վերսու գարձած էին, ինքնին փոխուած . Ֆրանսական բարքեր ու սովորութիւններ իւրացուցած, առաջին քայլերը իրե՛նք առին իրենց տան կարգն ու սարքը փոխելու համար : Ամիրներու նախապետական նիստ ու կացը վերցաւ թիչ ատենուան մէջ, սկսելով նոյն իսկ ա՛յն տուներէն՝ որոնց հիմնարկութիւնը ցեղին աւանդութեանց հաւատարմի գաւառային ամիրներն իր կատարած էին : Ժամանակին գրականութիւնը կը քաջապէրէր այդ փոփոխութիւնը խօսելու, գրելու, վարուելու, մտածելու նոր ձևեր ցոյց կու տար ամէն օր . նորածին տղաքն իսկ շա՛տ հեղ ֆրանսական պնտուով կը մերտուէին : Գիչ առ թիչ այս փոխանցումը աւելի շեւտուեցաւ . պարահանդէս, նուագահանդէս, թատերական ներկայացում, երեսուկոյթներ, եւայլն սովորական բաներ զարձան Պոլսածայց համար : Աղջիկները, իրենց կար-

զին եւրոպական, մասնաւորաբար Ֆրանսական կրթութիւն մը սկսան առնել, խնամութիւններ հաստատուեցան Ֆրանսացի ընտանիքներու հետ, — ինչպէս օրինակի համար Տիկին Տիւսար փաշա, — եւ մեր պրոպագանդները, — որոնց մէջ Ֆրանսերէնը միշտ իբր միակ եւրոպական լեզուն կը մնար, — գրեթէ առանց բաղառութեան Ֆրանսական ուսուցման կեդրոնով ու գրեթէ շարունակութեամբ :

* * *

Ինչպէս կը տեսնուի, Ֆրանսական գրականութեան ու բարձրուն Պոլսահայ համայնքին վրայ ունեցած ազդեցութիւնը կարծուածին պէս առանց պատճառի, անիմաստ պարզեցի իրենց ընդհանուր գիծերուն մէջ, ուրիշ ո՛ր եւ է համայնքի մէջ ալ նմանօրինակ փոփոխութիւն մը պիտի կրնային առաջ բերել : Ֆրանսական մասին մասնաւորապէս արձակագրէս անկարելի էր Ֆրանսական ազդեցութեանէն խուսափումը . եթէ դէպի Ֆրանսական գրականութիւնը այդ աստիճան ուշադրութիւն դարձուած չըլլար, եթեանհանկան թուականներու մեր գրականութիւնը զոյտթիւն իսկ չպիտի ունենար : Եւ չիտակը չեմ ալ կարծիր որ Ֆրանսականին տեղ ուրիշ գրականութիւն մը պիտի կրնար նոյնչափ սպեկորիչ ու խանդավառ ազդեցութիւն մը ընել մերինին պէս աակաւին խակ, անուս ու զարգացումէ դուրի համայնքի մը վրայ :

Այդ պայմաններուն մէջ ծագում առնող գրականութեան շարունակութիւնն է անսանձ զոր մենք կ'ընենք այսօր . ուղղութիւնը չէ փոխուած առաջին օրէն մինչեւ հիմայ, եւ հուսանական ալ չէ՛ որ փոփոխութիւն պիտի ըլլայ, ինչ որ ժամանակին Ֆրանսական գրականութեան ընդօրինակուած էր, այսօր ա՛յն աստիճան նոյնացած է մեր ըմբռնումներուն ու գիտելու եղանակներուն հետ, որ պարզապէս չեղալին յատկաւիչի պէս բնական բան մը գարձած է : Մեր նախորդները պիտակցարար փոխ կ'առնէին բացառելու կերպեր, դատաւորութեան ձեւեր, ոճեր, ստացուածներ, բառեր եւ ուղղութիւններ . այսօր, մենք, այդ միեւնոյն բաները ըրած աստիճան եր-

բեք չենք զգար սնունդ օտարօտի բնոյթը . մեզի անանկ կու գայ թէ այդ փոխ առնուած բառերը, ուղղութիւնները, դատաւորութեան ձեւերը, ոճերը եւ այլն, իսկապէս հայ բաներ են, եւ թէ իբր մեր կը գործածենք : Այս անգամանքը ալ անկարելի է որ վերնայ Պոլսահայ գրականութեան ու գործունէութեան վրայէն . ո՛չ մէկ բան կրնայ զուտ մը ընել, ո՛չ մէկ հակազդեցութիւն կրնայ տարբեր հոսանք մը առաջ բերել : Չեմ ըսեր թէ փոփոխութիւններ չեն կրնար ներմուծուիլ առայ մէջ, չեմ ըսեր թէ այս կամ այն գրողը չի կրնար տարբեր ուղղութիւն մը ստեղծելու փորձեր ընել, բայց վերջապէս ի՞նչ կրնայ ըլլալ աստիճանով . արդիւնքը շատ մակերեւուածային բան մը պիտի ըլլայ միշտ, եւ չպիտի կարենայ խախտել ըսն իսկ հիմը, որ զուտ Ֆրանսական գրականութեան սղուով շարախուած է :

Կը մնայ գիտնալ թէ Ֆրանսական գրականութեան ու բարձրուն Պոլսահայ համայնքին վրայ ըրած այդ ազդեցութիւնը իրապէս միասակուո՞ր եղած է, ինչպէս կը ջանան կարծեցնել : Ատիկա յաջորդ յօդուածով :

ԱՄԵՐԻԿԱՆԵՐ

ՅՐԵՄԻԱՅԻՆ

Տարի մըն ալ՝ օխ առ օխ՝
 Հե՛տա՛ որ առ օր՝ սահեցաւ .
 Յու՛ւ մ'այն օրե՛ն՝ ուր մեր սիրտ
 Ջգաց սիրոյ ցուցնց անբաւ :

Կը խօսէիր խանդով բունդ,
 Կը լափէի բառերդ բոց,
 Ու ետքեանդ խօ՛ր անդունդ
 Ջգայի սերդ գեղդ հնոց . . . :

Համբոյր մը մեղմ թէ գգաց,
 Երբու՛նքդ լուրջ, հպարտ, վէս,
 Հոգիս համակ բրբուսայ
 Այդ հպումով հրակէգ :

Թարգմ. Ե. Գ.

ՇԱՊԻԿՃԻ ԱՐԹԻՆ

(ՆՈՐԱՎԷՊ)

—→←—

Այն կիրակի առաուն, Ս. .ի եկեղեցիին մէջ թ. . եպիսկոպոսը պատարագ կը մատուցանէր: Եկեղեցիին սօնախորհուրթիւնն էր Սոփորականէն շատ աւելի ճրագներ, ջահեր ու ճառեր կը պայծառացնէին սրբավայրը: Ծագիկները առատագոյն, իունկերը աւելի նուշարոյր, սպասները եւ հանդերձները աւելի ճոխ: Ոսկին, գորտխոր ու յակինթը, արթնեալ սփռոցներն ու վարագոյրները, ու շուրջանները, խայտաճամուկ գորգերն ու օթոցները, նորութեամբ ճաճանչագիւ արծաթ բուրվանները տաճարը ակնախորհող հակալ ակնատուփ մը կը յօրինէին, որուն մէջ խտան ի խուռն վարկպարագի խոնած ըլլար իր գոհարները դիւթական զմանճ պարիկի մը անհրամս ձեռքը:

Քանհանները զո՛ր ու հպարտ կերպարանք մը ունէին: օրը ապահովագէտ իրենցն էր, Պատարագամատոց կերականը, որ տեղացի չէր եւ հրաւիրուած էր այդ օրը, աւելի զարին տակէն արտափայլող ճերմակ սաքերը խոնարհած, խօսելիք քարոզին ստաղձները կը յարգարէր, յորինուածը կ'որոճար ու կ'ուրուագճէր:

Պարոն Արթինը գործի վրայ էր: Դպիրներուն իրենց շապիկները կը բաշխէր, չորսոտքերու վրայ հաստատուած շատ բարձր ու երկայն սնուակի մը մէջէն հանելով, հարիւր անգամ ընդարձակ կախարիչը բանալով, գոցելով, իրենց շապիկէն զժգո՛ւ անտակ տողց երեսը անաչառ նայուածքի մը խարազանովը ձողկելով, անգագար, անհանգիստ, երկբուն, մարմինին վրայէն առանց շապիկի հագած, հնութենէ ճերմակ շատ վերարկունի սակէն՝ թիկնակները անօթի գունչի ողնա-յարի յետոյքին պէս ցլուած, գարշապարները ծակ եւ կրօնկներուն չոր ու փոթ փոթ միտին դեղինը ցուցնող բուրբէ գորշ ճերմակ գուլպաներովը՝ հակառակ ամառուան եղանակին, մարմինին ու կոշտ կաւաին հպուսին պատճառած մարմաջէն ուսերը յաճախ վար

ու վեր շարժելով, մեծ մասամբ ճերմակ ճերմակ մօտաքը երկայն ու կարծր եղունգներովը քերելով:

Շապիկն Արթինը — այսպէս կը յորջորջէին դպիրներուն հանդերձագարը — այն օրը շքեղութեան մէջտեղ տեղադրութիւն մըն էր, երկնքի պայծառութեան մէջ յանկարծ ինկած մութ ամպ մը, արծաթ սկուտակի մը մէջ յիս գիտեր ուրկէ թափած կուտա մը ցելս, աղեմսիկ կական մը յեղակարծ բարձրացող հարսնիքի մը ուսախորթեան մէջտեղ:

Եւ արգասի Արթինը Լացն իսկ էր: Տղաքները, չորսճերմակները, «նանէյով իլիմոնի խապուխը» կը կոչէին զայն իրենց մէջ, Ուրիշներ, շատ սակաւաթիւ, որ անոր արտակալք պատմութիւնը գիտէին, տեսակ մը յարգալից կարեկցութեամբ կը նայէին անոր վրայ, մանաւանդ երէցները որ կը յիշէին անոր առջի վիճակը:

«Նանէյով իլիմոնի խապուխը» իր աղետալի պատմութենէն բուսած մէկ բառն էր, զոր կը կրկնէր երբեմն, առանձնութեան մէջ, անոնց որ համակրութեամբ ու կարեկցութեամբ իրեն կը մտեհնային:

— Աղբա՛ր, մէկ նանէյով իլիմոնի խապուխը չըրի՛ր. . . որ աղէկնար:

Ութ տարի առաջ հողը զրած էր իր մէկ հատիկ աղջիկը, Սուրբիկը, տասնընթեք տարեկան, Հայրը, կարծելով որ կուրծքի հարուստ պէս բուն մըն էր իր զուկին ունեցածը, եւ մաքէն անգամ շանցնելով այն ստակայի ախտին գաղտնիքը որ հիւճիւռ հակամար այնքան մատաղ էակներ գերեզման կը տանի, տանը մէջ եղողներուն ըսած էր որ անանուխով եւ կիրտոնի կեղեւով մըտալու մը պատրաստեն ու տան հիւանդին: Կինը, քուր գանուղ ուրիշ քանի մը կիներ, թիթ բերան ընկելով անդին դարձած էին, կիրտոնի մալո՛ւխ, շիտակը աղտո՛ր պղօ կեղեւ աղջիկը որ օրի կը վառէր կ'երթար կոր, ու լիմոնի կեղեւով պիտի աղէկնար:

Ահա ասոր համար էր որ, երբեմն, ինչպէս ըսինք, անվրէպ երեսակայուած զարմանի մը անվտարելի խորհուրդովը տանջուած, ութ տարիներ վերջը աղի օրուան պէս կը կրկնէր դառն ժպիտով մը՝ իրեն կարեկցութեամբ մտադրողներուն,

— Մէկ նանէյով իլիմոնի խապուի ընէ-
իւն նէ . . .

Ու այդ փոխտին մէջ արցունքներու ան-
հունութիւն մը կար . ու այդ բառերուն մէջ,
որ աւելի հծծուած էին քան թէ արտասան-
ուած, անուշ սրտմայուքի մը շունչը կար,
երկար տարիներով բաղձացուած ու վերջա-
պէս կորսուած անհետացած բանի մը մորմոքը,
թերի իմն անթեղուած կրակի մը տաքու-
թիւնը :

Այսպէս, երբ այն առաւօտ ներսը, խո-
րանին վրայ ակնարկ մը նետելու միջոց մը
ուենենար, կը մոռնար իր գործը, անհետա-
ցածը կը յիշէր, արցունքներ կը քթօջէին
նայուածքը, առանց հոռու . աղաքները,
«չապիկ» կը պոռային . չէր լսեր . Անպին էր
Բայց պահարանին մէջ կեցող քանի
մը լուրջ անձեր, օրոնց մէջ կեցած էին նաեւ
Քաղական Ոտրհուրդի անդամները, Քորոս
աղան, Մկրտիչ էֆէնտին, Տիրան էֆէնտին,
սկսած էին անհամբերութեան նշաններ ցոյց
տալ շապիկներն շրջապատող խնդրարկուներուն
ընթացքէն :

Երբ վերջապէս Արթին կրցաւ լսել, առջին
դարձաւ, աչքերը չթափուած արցունքներէ
այրած մրկած, եւ սկսաւ դարձեալ երերալ,
բանալ, գոցել, շապիկները հանել, տալ,
նետել, փայտէ խարխուլ մեքենայի մը խնց-
քեկ շափումներով, գորշ կապոյտ երակները
ձեռքերուն խորշումած մազաղաթին վրայ ու-
ռննալով, ծռելով, կանգնելով, երթալով,
գալով :

Տարէց ու թաղական աղաները, որ պա-
հարանին պտտկառելի լուծիւնանը մէջտեղ
շապկապահին տարօրինակ իրարանցումնե-
րուն վարժուած էին, քիչ մը արգահատանքէ
եւ քիչ մըն ալ ակնածութենէ արդիւուած,
դիտողութիւն բնաւ չէին ընել, եւ կը պա-
հէին իր բարձրութեանը մէջ մեծարոյ անձե-
րու իրենց անվրդով եւ հպարտ ջերմեռան-
դութիւնը, սպասելով պնակ պտտցունելու
հոգեբանական վայրկեաններն, 'որ խաչակնքե-
լով, 'որ երգասացութեանց ընկերանալով
դաշն, անլսելի մթմթթանքով, դէպ ի ներս,
տաճարը հաղուադէպ նայուածքներ արձակե-
լով դուռնէն կամ պատուհաններէն :

Այդ թաղականներուն մէջ, մէկը մանա-
ւանդ, առնուպետը, պարոն Արթինի անձա-
ռու անպատշաճ պաշտօնավարութեան մասին
դժգոհութեան գերազանց պատճառներ ունեւ-
նալով հանդերձ, ներողամտութեամբ կը
վարուէր անոր հետ, եւ նոյն իսկ իր ընկե-
րակիցներուն՝ ժողովի մէջ այդ մասին ըրած
դիտողութեանց բերանը կը գոցէր, առարկե-
լով շապկապահին անկեալ վիճակը, տնան-
կութիւնը . Միւսները քիչ մը պիտէին որ
Քորոս աղան ուրիշ պատճառներ ունէր Ար-
թինի նկատմամբ թոյլ գտնուելու . բայց այդ
պատճառները ընտանեկան ներքին ու նուրբ
հանդամանք մը ունէին, եւ դիւրին ու հա-
ճելի բան չէր գէշ ըլլալ Քաղական
Ոտրհուրդի ատնապահին հետ, որ հարուստ
անձնաւորութեանց մէջ մէկէ աւելի բարե-
կամներ ու պաշտպաններ համբելու առաւե-
լութիւնը ունէր : Գիտէին, օրինակի համար,
որ Քորոս աղան, հակառակ իր դիրքին բար-
ձրութեանը, յաճախակի այցելութիւններ
կուտար Արթինի տունը, եւ թէ այս վեր-
ջինին ամուսինը, քառասունը նոր անցուցած,
այն կիներէն մէկը զար ուրիշ կիներ աղուորիկ
կ'որակեն՝ աղուոր ըսելու անհանգստութենէն
ազատելու համար, արդուկեղու, կարելու
կարկտելու վերաբերեալ մանր մունը գործեր
կարգադրելու համար, պարբերաբար կ'եր-
թար տառնապետին տունը, որ դիւրակիցիկ
ճանչցուած ամուրի մըն էր, միակ սպասա-
ւորով մը որ միանգամայն իր խոհարարն էր :

Այս յարաբերութիւնը, զուտնի չըլլալով
եւ զաղտնի չըլլալուն համար, անպատեհու-
թիւն մը ըլլալէ կը դադրէր, մասնաւոր թէ
տասնէն աւելի տարիներու կերպով մը նուր-
բազորած ընդունուած կացութիւն մը կը
ներկայացնէր : Չար լեզուները կրնային ու-
զածնուն չափ իրենց բարբանջանքները ծա-
մել մութին մէջ . ոչ իրեն եւ ոչ իրեն պաշտ-
պանեալին, պարոն Արթինին քով օր մը
օրանց եկող մը, բան մը ըսող մը չկար, ու
չպիտի ըլլար . Եւ այս ամէնուն մէջ կարծես
թէ շապկապահն էր միայն որ բան մը չէր
գիտեր, բան մը չէր լսած : Եւ իրաւ ալ,
մէկ հատիկ սիրական աղջկանը երկարատեւ
հրահանգութիւնը եւ վերջը կորուսար գրգռե-

անոր միտքը ընկճած եւ բռնակրօնութիւնը ընդարմատուցած էին, եւ եթէ իրեք ասուհարմարին փոյթեաւանդութիւնը իրեն անբարեկարգութեամբ ալ էր, իր հոգեմայր կրօնականութեան զժողովարայաղթիլի գաղափարին հետ միանալով, որ եւ է ուրիշ կիրք քրիստոնէական էր իր մէջ :

Եկեղեցիին, տունը, ասպին, անդին, բան մը չէր երեւար աչքին : Մտասոյգ եղած էր անվանիլի գաղափարի մը մէջ, եթէր կամ ութ ասորեկան աղջկանը պատկերը որ իրեն կը ներկայանար, ճերմակ զգեստներով, մազերուն խոպոպիքները պարանոցին շուրջը թափթփած, ջրտեսիլի գոյն կիսակոշիկներու բով, թեթեւ, շարժական զլիարկ մը աղուոր հաւփալի մը նման զլիտուն վրայ հանգչած : Այսպէս սեսած ու սրտած էր իր աղջիկը քանի քանի սնգամ, ծովագերբին մօտ զբոսաւայրի մը մէջ, ուր գիւղին շատ մը ընտանիքները կ'երթային եւ ուր ինքն ալ կ'նստըր ու պակին հետ երբեմն կ'իրակի օրերը կ'երթար քանի մը ախորժելի ժամեր անցընելու :

Եւ երբ կը յիշէր տարուէ տարի անոր մեծնալը, զարգանալը, անոր անուշ բառերը, գորովի քրտայայտութիւնները, հօրը սրտը կը ճեղքուէր :

Շատ անգամ, իրիկուան մօտ, գիւղին կից բլուրին վրայ կը բարձրանար, ուր կը տարածուէր գերեզմանատունը, այդիլի մը վերիդին : Հոն, առանձին, շորս դին նայելէ վերջ՝ ապառով ըլլալու համար որ զինքը դիտող մը չկար, վերարկուին կոճակները կը քակէր, ձախ կողմը ներքինկտալին քնիտանդներով վարտուած ճերմակ զգեստիկ մը կը հանէր, կը ծնարգրէր, լաթիկ կտորը քովը դրած, իր ձեռքովը յօրինած եւ ծաղիկներ անկած հողակոշտի մը վրայ խոնարհած : Այդ զգեստը ութը տարու աղջկանը մաշած զգեստիկն էր, զոր օր մը ծրարի մը մէջ տեսած ու կ'նստուէր ուղեւոր եւ առած էր :

— Աղջիկս, Սուրբիկս, կը խօսէր հայրը գետնամած, լացող մանուկ մը համոզել շահացող ծնողի մը համբերութեան ժպիտովը, սահա եկեր եմ . . . : Երջագեցեսդ հոս է :

աղջիկս . . . կը յիշէր, ամառը, տաք օրերուն, իրիկուան դէմ, հոն . . . : Անուշ զաւակս, ինծի հոս մ'ննակ ինչու՞ ձգեցիր . . . Թէ որ գիտնայի թէ պիտի ձգէիր երթալիր, ի՞նչ գիտնամ . . . այնչափ չէի սրբեր, պակասուցութիւն մը կը գտնայի քեզի . . . պակասութիւն չուէ՛ր . . . կը ստեղծէի . . . կ'ըսէի որ անխեղքին մէկն ես, անզգայ մը, որ հայրը չի սրբեր, անհոգ է ծնողքին համար . . . կը խարէի ինքզինքս . . . : Այս եղաւքը մտքէ չէր անցնէր . . . : Անկէն ի մէկ բուն մը եղաւ . . . : Ախ, հոգիս գետնին քարերուն տակ, գետնի քարերուն, որոնց ոտքովը դպելէն կը վախնայի, որ չըլլայ թէ ցաւի : Հողերուն տակ, զաւակս, ձիւնիք, անձիւնիք, բուքին : Գիտե՛ս, իրիկուն մը, տասը տարեկան էիր, Սուրբիկս, վար ինկար, զուգիզ ցաւեցաւ . . . : մայրդ լաթով մը կապուց . . . : լացիր . . . : Այն գիշերը միջնու առտու շքանայք, լացի, աղջիկս, կամաց կամաց քովդ կուգայի, վրայդ կը ձուէի : Դուն քնացար . . . ես չկրցայ քնանալ : Ատտուած իմ, հիմա ալ անանկ եղաւ . . . : դուն կը քնանաս, ես չեմ կրնար, չեմ կըրնար քնանալ . . . : Երթալէք ի վեր շապիկ չեմ հագեր, աղջիկս . . . : մարմինս կը տանջեմ որ լմնամ . . . : բայց չըլլար կոր : Միտքերնիդ բերէք անգամ մը, շրջագեցեսդ հոս . . . : Ան, Սուրբիկս, աղջիկս, զաւակս չկայ : Որո՞նք մտքն կ'անցնէր . . . : ես մնամ պիտի եղեր . . . : դուն հողին տակ . . . : հողին տակ, աղջիկս . . . :

Ու Արթին հեկեկանքով կուլար, շորցած դանկը թաց հողին քակով, զգեստը համբուրելով, սրտին ամէնէն խորէն աղաչելով Ատտուծոյ որ երակ մը պայթէր լանջքին մէջ, ու հոն մնար, անոր մօտ, անոր հետ : Յիշողութեան անհար մէջ յուսահատութեամբ կը փնտռէր թէ ի՞նչ մեծ յանցանք մը գործած էր կեանքին մէջ որ չէր կրնար մեռնել :

Եւ այս ողբագին յիշատակներուն մէջ, չէր գծեր ան իր աղջկանը վերջին մէկ քանի տարիներուն ուրուագիծը, զոր մոռցեր էր, զոր չէր ուզեր կամ չէր կրնար ես կանչել : Սիրահարած աղջիկը կը խուսափէր իրմէ : Ո՛վ գիտէ ինչ անպատեհի քառսի մը տեսարանին ազդեցութեանը տակ թաղուած ըն-

կզմած էր, որուն կը գործակցէր թերեւս նաեւ կնոջը անհաւատարիմ թեթեւաբարտյութեան պարագան : Տարտամ կերպով կը մըտածէր որ այդ մէկ քանի տարիները Սուրբիկի որոինն մէջ նոր եւ տարապայսման զգացումով մը մտաւոր կը նշանակէին : Կը յիշէր երիտասարդ մը որ քանի մը անգամ իրենց գիւղը հիւր եկեր էր, երիտասարդ մը որ Թորոս աղային հետ վերջը գժտութեան պէս բան մը ունեցեր էր, եւ զոր Թաղական Խորհուրդին աստեղծածը յաջողոր էր արդիւնը Սուրբիկի ծնողքին ամուսնութեան ատարարութիւն մը ներկայացնելէ : Եւ թէպէտ Սուրբիկ սիրած էր այդ դեռատի անձը, Վահանը, Թորոս աղայի մէկ հակառակութիւնը պատ քայած էր, համոզելով Թագուհի հանրը, Արթիւրի կինը, համոզելով նաեւ այս վերջինն ալ որ այդ ազան անպիտանին մէկն էր : Ու Սուրբիկի ծնողքը չէին կրցած դէմ կենալ Թաղական Խորհուրդին բանիմաց աստեղծութեանը :

Արդարեւ Վահան՝ Թորոս աղայի անհաճոյ ըլլալու զգառութեան արժանացած էր անոր դէմ ըմբոստ ընթացքով, մինչդեռ գրեթէ ամէն մտրդ կը համակերպէր անոր, Վահան, գիւղէն չըլլալով, համարձակած էր, անգամ մը որ իր սիրոյն արգելք ըլլալու ելած էր Թորոս աղան, օր մը կամայ մը անոր երեսին տալու անոր գիրակեցութեան կնճռու գաղտնիքներէն մէկ քանին, թաղային գործերու մատակարարութեան մէջ բաւական ժամանակէ ի վեր անոր գործած զեղծումները, ժառանգութեան մը խնդիրը զոր Թորոս աղա, մէկ երկու սուտ վկաներու օգնութեամբ, յաջողած էր իրեն նպատակարար կերպով լուծելու, ի վնաս օրինակոր ժառանգորդին որ չապակապահին ընտանիքն էր :

Ժառանգութեան այդ գործը իրաւ է որ քիչ մը հինցած ու գժտարարընձիւ գործ մըն էր, եւ Թաղական Խորհուրդին աստեղծութեան յաջողած էր Արթիւրը ու անոր կինը ապահովեցնել թէ այդ մտանի կարեւրի եղածը ժամանակին պիտի կատարէր : Կարելի եղաւ որ կատարած էր : Բայց, պտուղը քաղելէն վերջը, կամայ կամաց ինքը ճաշակած էր զայն : Ժամանակ վրայ անցած եւ սպասումի

արտմայութիւն վրայ ալ զով ջուր լեցուցած էր : Ու հիմա՝ այլ եւս խնդիր չկար : Միայն ի՞նչ, այս գործին արձագանքը, ինչպէս գրեթէ միշտ, անդին վրայ ձայն չտալով, հեռուները քիչ շատ զգայի եղած եւ մինչեւ Վահանի տակաւնից գտարիք էր, թէեւ շատ խուռ ու տարտամ :

Ատեղծութեան զայրոյթը, Վահանի ամբարտաւանութիւնը պատճելով, Սուրբիկն ալ զարկած էր, ինչպէս որ կտրի մէջ մէկուն գլխուն կշտուած հորուած մը կրնայ անոր քովինին զլխուն ալ հանդիպիլ : Վահան ա՛լ չէր կրցած իր սիրականին գիւղը ոտք կոխել՝ զանազան արդէլքներու առջեւ, որոնց մէջ կրնար համարել աստեղծութեան խորհուրդներուն մշտնջուր Արթիւրի եւ իր կնոջ դժկամակութիւնը եւ երես չտալը :

Սուրբիկ, մանկան մը պէս սրուն աղւոր պէպէքը ձեռքէն կ'առնէն ուրիշի կուտան, արտէն զարնուած, հրահողացած էր :

Վահանի անձին զայով սակայն, կրնանք հաւատաւել որ Սուրբիկին շատ արժանի չէր : Ետապակասին աղջիկը փափուկ, զգայուն ու միամիտ հողի, չճանչնալով համակրած էր, ու վերջը հարաբերով սիրած : Բայց Վահան աւելի նրախական շատ ակնկալութեամբ ճարտար ելած էր, ակնկալութիւն զոր մտորած ժառանգութեան մը օրինակոր աշխարհն պատահական վերադարձը կ'արդարացնէր, ու կը կեղծէր :

Վահան, իր գիւղին մէջ, շատ պարկեշտ ու պատուաւոր երիտասարդի համբաւ չունէր : Դատարկագործ էր : Զենք ըսեր բողոքովին, այլ քիչ մը կը պատկանէր երիտասարդներու այն նմոյշին, որոնցմէ ամէն անգ մէկ կամ երկու հաս անպատեճա կը գտնուին, որ, շատ անգամ աւրաւերի տղու հովեր մը ունին եւ իրենց եղած գեղին մէջ ամէնուն ծանօթ են իրենց . . . ունայտութեամբ, որ անպատեճա խելքէ մտքէ չանցած, անկարելի անուէրի մը կը պատասխանեն, օրինակի համար, Պիտար, Կանո, Զիւլան, Միւսոն, կամ Պիմէն, որ լաւ հագուելու միջոցներ չունենալով՝ միշտ լաւ կը հագուեն, շնորհիւ այս ինչ հոչակարին, կամ ամայ ինչ զգալիւսաճառոյն, կամ գերձակին հետ եղած կնճռու ու շատ ան-

զամ անխոստովանելի հաշուընթացներու , որ հաճելի գլուխ մը կը կրեն իրենց ուսերուն վրայ , եւ որ քառասուն անուշամեծ եւ գեղեցիկ կին ունեցող ամուսինները շափափեալ անելի անուշ ժպիտով մը կը բարեւեն :

Սուրբիկի կուրծք քանի քանի անգամ այնպէս բաբուխած էր սակայն Վահանին ներկայութեանը , որ կարելի է նոյնպէս որ , եթէ Վահանին առաքինութեանց թեթեւ քանակը ճանչցած ալ ըլլար , սիրտը անոր պիտի տար : Ժամանակդ որ անոր հետ միւսեմունք մը պատճառ մը պիտի ըլլար հաւանորէն հորեւնական գոռունէն իր հետադման , որուն մէջ բաւական ժամանակէ ի վեր սիրտ կոտորելու բաներ կը դատարարէին : Քանի ժամանակէ ի վեր , խեղճ աշխիւր , թէեւ բոլորովին միամիտ , ինչպէս ըսինք , նշարած էր իր մօրը եւ Թորոս աղային դժուարամեկնելի հաղորդակցութիւնները : Մայրը անհողին մէջն էր ապահովակէս , թեթեւ : Ողորմելի աշխիւր հայրը չափազանց կը սիրէր անոր բանալու համար իր անհանգստութիւնները : Եւ Թորոս աղան , ինչպէս որ մշակած էր Արթինի վերաբերող ժամանակութիւն մը , կը մշակէր երկար ժամանակէ ի վեր , անխափան անարդել , նաեւ անոր ամուսնոյն բարեկամութիւնը :

Ու հիմա , այս ամէնուն մէջտեղ , երբ Սուրբիկ այլ եւս գացած էր , ու Արթին , գործերուն անոյոյթ , ինքզինքէն դուրս , ամէն բան թողուցած , կրնր մոռցած , ամէն բանի վախճանին սպասելու աղեճելիկ դիրքը բռնած էր , Թաղական Խորհուրդի ստեղծուցեալը , առնել ասպրեցնելու համար , երեք հարիւր դրուշ ամասականով չապկապահի պաշտօնը յանձնած էր անոր :

Այսպէս կարգադրուած էին գործերը : Եւ որովհետեւ Արթին , օրէ օր աւելի ինքզինքը թողուցած , վրան գլուխը պատռուած , անխնամ , գասալիք , կը շրջեցնէր արեւին տակ իր եզկելի գոյութիւնը , եւ իր կնոջն ալ , Թորոս աղային ալ յաճախակի յորդորները անպառուջ մնացած էին , համակերպի էին թող տալ որ թշուառ հայրը անասունան հանկուտեմամբ անոր քովը երկուսու վարկեանին սպասէր :

Անոր համար է որ հիմա , պատարագի միջոցին , երբ սարկաւազներն ու զպիւրները , սեղանին ճիշդ առջեւը շարուած , սկսան սուր խաղերով հնչեցնել «Ջերգս հողեւորսը , ծննդաներուն , քաղցներուն , բուրձաններուն շոնդին , խուսկերու թանձրամած կոտորտին մէջտեղ , պրիմակներուն մէջն մայրելով իջնող արեւի ճաճանչի մը լայն փողին յօրինած ծրածաններուն մէջտեղ , ճառերուն , կանթիզներուն մէջտեղ որ ցնթութեամբ կը նշողէին , ճերմակութեանց մէջտեղ որ երկրաւոր շեղող բնակարանի մը ցուացուածով կ'ապրէին , սիւնազարդ հինաւուրց անդաստանի մը բովանդակ դիւթի շքերթութեամբ սողորուն , Արթին , ընկուզենի բարձր արկղին կրթնած , ապառ շայուածքը պահարանին պատուահանին ձողբրէն ներս խորանին վրայ եղածներուն սեւեւած , մոռցած ամէն բան , քանի մը տղաներն ալ որ չապկիկ կը սպասէին , յետամնաց սարկաւազ մըն ալ որ ի զուր շապիկ մը կ'ուղչէր իմէ , խոլ , անդգայ՝ վերացած , անհիթկացած , ստէացած , այդ աղմուկներուն , այդ բարբառներուն հասունքէն ի քար վարուած , այդ շողիւնին մէջը , ետին , վրան , յետ մահու գոյութեան մը դրախտը բաց աչքով տեսնելով , անխայտանի նշարելով իր գլուխը որ հոն էր , հրշտակներու մէջտեղ , լոյսերէ պաշարուած , ծաղիկներու ու լուսափառիկ խունկի ամպի մը մէջ խեղդուած , զինքը կանչելով , Արթին կը զողար , գոսոցած երկթացած մարմինին տակ ծածուկ սրունքները կը խուսափէին , կը զարար որ իր գոյութիւնը կը հալէր , եւ յենարանը եթէ չըլլար , պիտի կործանէր :

ՅՈՒՆ. ՍԵՅԵԱՆ

Ինքզինքեամբ կը ծանուցանենք թէ , Մանգուսեի Էֆէնար եւ Մարտինիակ օրաթերիները , կարճատեւ դադարուէ մը ետք , հինգշաբթի առաւօտէն վերական հրատարակուի՝ արտօնութեամբ Տպագրական Տեսչութեան : Նոյնպէս Փոսեջ լրագիրը :

Տոբ. Սգուարդ ԷՏ. Մասիս Բերայի Թագ. Խորհուրդին անդամ նշանակուած է Տոբ. Իսախանեան ԷՔ ի տեղ որ վերջնապէս Բարիկ հաստատուեց :

ԼՍ ՓԻԱԶՁԱ

(Ք. եւ վերջին մաս)



Ութսուներեք կանգուն երկայնութիւն եւ յիսուելից կանգուն լայնութիւն ունի Ս. Մարկոսի տաճարը, եւ յունական խաչի ձեւը, Քայլ առ քայլ ու լոխկ կը յառաջանանք՝ կտնոգ առնելով մոզայիքի մը, կիտուածի մը, սիւնի մը, արձանի մը քով, մինչեւ որ կը հասնինք չքնադագործ աւագ խորանը, որ կը կենոյ կանանչ քարի ամպովաճուոյ մը տակ՝ մարմտորեայ քանդակաւոր չորս սիւներով վերամարարձ, Արձանթի ու սովոյ տախտակներու վրայ մեծագին գոհարներով ընդհուզեալ է սոյն խորանին պատկերը, Պոլսոյ արուեստագէտներուն ձեռամբ պատրաստուած ԺՔ. դարուն սկիզբը։ Իր արժէքին մասին յիշուած գումարը, եթէ յիշողութիւնս չի խաբար զիս, այնքան աւառապելական ու անհաւատարի է, որ չեմ համարձակիր կրկնել զայն հոս։ Ստոյգ է թէնք թէ վենետիկցիք իրենց ամէնէն յաջող ժամանակները, դարերու ընթացքին մէջ՝ ո՛չ դրամ խնայած են եւ ո՛չ այլատեսք աննման ընծայելու համար իրենց պաշտպան Սուրբին այս նուիրական բնակարանը։ Այս մեծածախ պատկերը սովորաբար ծածկուած է վարագոյրով մը որ միայն մասնաւոր առթիւներով կը բացուի։

Շէնքին շուրջը բաւական բարձր նրբանցք մը կայ, ուրկէ աւելի մտաէն ու մանրամասնորէն զիտեղու համար մօզայիքները, կ'անցնինք լոխկ ու պատկառ, մինչ մեզմէ վար խորանին առջեւ՝ աղօթք քնի կը մըթմթայ քանանայ մը, եւ երգերու ու երգեհոնի գոռ ու ներդաշնակ մեղեդիներն ալ արձագանգ կը գտնեն անկիւնէ անկիւն։

Ժամեր կ'անցընենք հոս։ Ամիսներ անցուցած են հոս ուրիշներ, եւամերուն մասնագէտներ, եւ հատորներ յօրինած՝ նկարագրելու եւ դրատաւելու համար այլեւայլ մասերն այս անդուգական տաճարին։

Բուրբը, հրապարակին մէջ մեծափորթամ վաճառատուններուն մէջ հաճոյքով կը զիտուէք գունաւոր լուսանկարներու, գեղեցիկ պատ-

կերներու, եւ այլ գեղարուեստի ցուցադրուած թիւներ, վենետիկի ապակիին համբաւը մասնաւոր ի վաղուց ատի տարածուած է ամէն կողմ։ Այս հրապարակին մէջ կը գտնուի այն ապակիի նշանաւոր գործարաններէն մէկը՝ կ'այցելենք ամէն կողմ. գործաւորներուն աշխատութիւնը կը տեսնենք, իրենց արտադրութեանց վրայ կը սքանչանանք, Մեզ յարպանք մը ընկուս համար մեր ներկայութեան իսկ գունաւոր ապակիէ զարդեղէններ կը շինեն եւ սուփիկներու մէջ դրած մեզ կ'ընծայեն ի յիշատակ մեր այցելութեան։

Հրապարակին արեւելեան կողմը եկեղեցուոյ մօտ կայ բարցրաբարձ դուռ մը, որ հազորդակցութեան մէջ կը դնէ Լս Փիսածան քաղաքին ամէնէն աւելի հարուստ խանութները պարունակող փողոցին հետ։ Այս դրան վրայ կայ աշատրակ մը՝ ուր երկու պղնձ հակահներ օրուան ժամերը կը հնչեցնեն զանգակի մը վրայ։ Աշտարակին պահապանը ցոյց կուտայ ճարտար մեքենաները որոնց շնորհիւ սոյն հսկաները կը կատարեն իրենց փափուկ պաշտօնը այնքան ճշգրութեամբ։

Կարելի չէ Փիսածայէն անցնիլ առանց ուշացրու թիւն դարձնելու նաեւ խուսնեմաւ աղաւնիներուն, որոնք շէնքերուն անկիւններն ու ճեղքերը կը թափեն։ Հին ասեղները քաղաքին եկեղեցիները սովոր էին ալաւնիներ ընծայ զրկել Ս. Մարկոսի հրապարակին, Մաղկազարդ սօնի օրը։ Պետութիւնը կը հոգար իր ծախքով այս աղաւնիներու բազմութիւնը, որոնք հիմա սակայն կարօտ միացած են մասնաւորներու ողորմութեան։ Մինք ալ ուրիշներու նման սիրալոյսով կը մասնակցին սովորութեան այս գործին։

Փիսածային հարաւային անկիւնէն մինչեւ ծովակը կը տարածուի ուրիշ հրապարակ մը, Փիսածէթեան, որուն մէկ կողմը կը բարձրանայ կամարաւոր, հոյատեսիլ շէնք մը, դրատունը, որ ամբողջ Իտալիոյ աշխարհիկ շէնքերուն ամէնէն շքեղներէն մէկը կը համարուի Միւս կողմն է հուշակաւոր Տօճերուն ո՛չ նուազ հուշակաւոր պատարը։ Այս սլալտտին վրայ էր որ կտառած էին մեր հայեացքը նախապէս, երբ ստանքն անցամ քաղաքը նշմարեցինք։ Եւ արդարեւ ա՛յնքան զիթիլ են իր նուրբ,

փափկածաշակ զարդերը , իր գեղակերտ ճա-
կատը , իր բազմաթիւ մեծ ու փոքր կոթա-
կան կամարները , որոնք կը շարունին իրարու
վերեւ , գունապել մարմարեայ ու ծիրանա-
քարէ շոջշոջուն սիւները , որոնց խոյսկները
տերեւներով , մարդոց ու կենդանեաց զէմ-
քերով ճոխապէս պծնուած են . եւ ուրիշ
այլազան հրաշալի քանդակները , որոնց ար-
ուեստին նըրուծիւնն ու փափկութիւնը իր
նմանը չունի ամբողջ Եւրոպոյի մէջ , կը յայ-
տարարէ Ուրաքին , բոլորանուէր սիրահարը
Վենետիկի :

Փոռաշուք բակին մէջ ենք : Վերք բարձր
պատուհանի մը մէջ մտանանիշ կ'ընին բանտը
Սիլվիոյ Բելլիքոյի , որուն վէպը այնքան յուզ-
մամբ կարդացած ենք ամէնքս ալ (*), Ուրիշ
արձաններէ ու քանդակներէ մեր հայեացքը
կը դառնան զէպի ի պալատ առաջնորդող շքեղ
անտուխը որ « Հակոբայից սանդուխը » կը կոչուի .
այն երկու հսկայ արձաններուն պատճառաւ
որոնք իր երկու կողմերը կանգնած կը հսկեն
երկու քաջարի , սնքուն պահապաններու
պէս :

Կ'անցնինք « Ոսկեղէն Սանդուխէն » , ուր-
կէ երբեմն կրնային անցնիլ այն առանձնա-
շնորհեալ ազնուականները միայն որոնց անուն-
ները նշանակուած էին « Ոսկեղէն Գրքին »
մէջ . իսկ այժմ ո՛ր եւ է երկրէ ու ո՛ր եւ է
ցեղէ ամէնէն խոնարհ անցորդին ոտքերն ան-
գամ կը կոխտեսն զայնս արձակ համարձակ :
Կ'անցնինք պճնազարդ նրբանցքներէն , կը
մտնենք ընդարձակ , պերճապայծա սրահնե-
րուն մէջ , զորս Վենետիկի ամէնէն հռչակա-
ւոր արուեստագէտները տարիներով , դարե-
րով աշխատած են զարդարել իրենց բոլոր աշ-
խուժումն ու հանճարովի Հոս Ծածեբուն կենդա-
նագիրներն , իրենց քաղաքագործութիւններն ու
առաքինութիւնները անմահացնող տեսարան-
ներ , հոն այլաքանական նկարներ , պատմա-
կան դէպքեր , որոնք Վենետիկի փառքն ու
մեծութիւնը կը պանծացնեն : Հոս քանդակ-
ներ , անդրիներ , հոն դուռապաններ , ոսկեզօծ
առաստապաններ , փափուլուն որմեր , թանկագին,
հազուադէպ անօթներ , զորս համառօտիւ

իսկ յիշատակելու համար՝ ընդարձակ էջեր
պէտք են :

Բայց այս փառքերովն ու պերճանքներովը
չլանալէ վերջ՝ այցելուն յօժար չէ մեկնիլ այս
վայրերէն առանց անգամ մըն ալ այցելելու
այլապէս մեծանշակ ուրիշ անկիւն մը : Հա-
ռաշնանաց կամուրջը , տիրահռչակին Փօնթէ
Տէի Սօսփրիիիք որ այնքան առատ նիւթ մա-
տակարարած է քերթողներու երեւակայու-
թեան ու զգացմանց , եւ անցորդն ալ չի
կրնար առանց սարուուրի դիտել զայն :

Փրածէթային մէջ ծովակէն ոչ հեռու կը
տեսնուին երկու կրանիթէ սիւներ : Մէկուն
գագաթը կը կանգնի Ս. Մարկոսի թեաւաւոր
խրոյստ ատիճը , միւսին վրայ՝ Ս. Թէո-
դորոս , վաղեմի Հանրապետութեան պաշա-
պան սուրբը , կոկորդիլոսի մը վրայ : Գլխատ-
մանց վայրն էր այս երբեմն , եւ այժմ հոս է
կօնադններու կեդրոնատեղին :

Անս այս Փրածային մէջ եւ այսպիսի
չէնքերէ շրջապատուած՝ Ս. Մարկոսի զէմ
առ զէմ աւելի քան տասը դարերէ ի վեր բարձ-
րագլուխ կը կանգնէր համբաւաւոր Քամբա-
նիկէն , որ ո՛չ եւս է : Թերթերն արգէն վեր-
ջերս մանրամասնօրէն նկարագրեցին թէ՛
չէնքը եւ թէ՛ իր անկման պարագաները :
Ատորճաններ չունէր վեր ելլելու համար :
Երբ իր ոլորուն անցքերէն զէպի գագաթը
կը յառաջանայինք յամբաքայլ , մեր առաջ-
նորդը մեզ կը պատմէր թէ Պոսարարթ ձիով
անցած էր նոյն տեղերէն , հետրոտն երթալու
յոզնութենէն խուսափելու համար : Ո՛ւր որ
ոտք կոխեր է այդ տարօրինակ մարդը , տար-
օրինակ պատմութիւններ թողած է իր հտին :
Չեմ գիտեր թէ այս ալ այդ առասպելներէն
մէկն էր զորս առաջնորդները այնքան կ'առ-
խորժին յիշեցնել , թէ իրական՝ զէպը մը :
Անգամ մըն ալ , մեզ կը պատմէր դարձեալ
մեր առաջնորդը , երբ Անգլիացի մը Քամբա-
նիկէն կ'ելլէր միտյանակ , շարագործ մը կը հե-
տեւի իրեն եւ վրան կը յարձակի զինքը կո-
ղտպետու համար : Բայց ճարպիկ Անգլիացին
իր սարճանակովը կը սղաննէ զայն , եւ մին-
չեւ յատակը կը զլտորէ դիտապաստ : Այս ալ
առաջնորդին կործօն երեւակայութեան ար-
գիւնքն էր պոմ ո՛չ , չեմ գիտեր : Սա ստոյգ

(*) Թարգմ. Կ. Ս. Խժժիճնանի :

է թէ արգիլուած էր ո՛ր եւ է մէկուն տաւն ձինն մտնել Քամբանիլէին մէջ :

Առանձինն կը կանգնէր Քամբանիլէին , եւ իր քառանկիւն զանգուածը օդն ի վեր կը պանար տւելի քան երեք հարիւր քսան ութ չրեշաակի մը կերպորանքը կը սուսանէր զագութին վրայ , պահապան հրշտակն էր կարծես բոլոր շրջակայ շէնքերուն ու վայրերուն : Տեսարանն ալ այնքան ընդարձակ էր որքան փառաւոր : Յայնկոյս ծովակին ու քաղաքին կը տեսնուէին Արպեանները եւ Փատուայի ու Իսդիբիոյ լեռներն ու Ադրիականի մէկ մտար :

Քանի մը Ամերիկացի բարեկամներ , որոնք Վենետիկ կը գտնուէին այս ամառ , այնպէս պատահեցաւ որ տեսան Քամբանիլէին անուուր : Ո՛չ թէ Քամբանիլէին ինկաւ , կը գրին , այլ ինչն իր վրայ կնիւրեցան խաղի թուղթի տրձակի մը նման : Եւ ինչ որ երբեմն Լա Փիսաձայի մէկ զլխաւոր զարդն էր , այժմ միայն աւերակներու բուրդ մըն է յիսուն կամ վաթսուն ութ բարձրութեամբ եւ աւելի քան հազար օտք շրջապիծով :

Ո՛չ ոք որ հիացմամբ եւ պատկառանքով նկատած էր այս հինաւուրց յիշատակարանը , կրնայ առանց տխրութեան դիտել անոր ներկայ աւերակին խանդիտուածն իր կողմերէն . եւ կարմանալի չէ՛ որ այնքարհիւ զորս կողմերէն , եւ ամէն զասակարգի անձեղէ ցաւակցութեան արտայայտութիւններ ուղղուեցան Վենետիկ , Քամբանիլէի այս տխուր աղէտէն այնքան օրեր վերջ , նոր աւերումներ ահա կը գուժեն հեռագրիները , դարձեալ տարբաղք Վենետիկի մէջ , եւ կ'ըսեն թէ ժողովուրդը սարսափի է մատնուած , Վենետիկի միծ մտքը շինուած է ցեցեցու վրայ , որոնք մասնական քարացած են կրսնն : Արդեօք սոյս հիմերը տեղի՞ տալ սկսած են , կը հարցնեն շատեր յարսափով :

Լա Փիսաձայն ա՛յ միայն ամէնէն փառաւոր ու կարեւոր հրապարակն է , այլ նաեւ ժողովրդեան նախամեծար ժամագրավայրը , եւ մանաւանդ ամբան իրիկունները , երբ կրակոտ արեւը կը խաւարի , եւ զինուորական երաժշտութիւնն ալ կը սկսի իր ամէնէն քաղցբալուր շնչաբերը հնչեցնել , հոն կը զիմէ

խուռներամ երկեսը բազմութիւն մը ամէն հասակէ , սրճարաններուն առջեւ նստած պողպատակներով , բուլեղիներով զովանալու , շաղկիքատեղու , կամ լուսաշող վաճառատանց առջեւ , դիւթական կամարներու տակ , եւ մարմարեայ սալայատակին վրայ ման քալու թեւ թեւի ու զուարթ :

Ու հոս , Լա Փիսաձային մէջ , Քամբանիլէին ստուերին տակ , հանդէպ Ս. Մարկոսի տաճարին եւ Տօճերու պալատին , եւ վաղնջուց Ատոնակայայ բնակարաններէն շրջապատեալ , հոս է աւելի քան այլուր որ անցելոյն յիշատակները կուգան խոնուել այցելուին մտքին մէջ : Ե. զարուն մէջ խել մը զաղթականներ իրենց զօրաւոր թշնամիներէն հալածական , կուգան այս մեկուսի կղզեականներուն մէջ սոպատանիլ : Բայց վերջապէս իրենց հաստատած քաղաքը կեղծութեան կ'ըլլայ ամբողջ եւրոպիոյ վաճառականութեան : Գաղթականութիւններ կը հաստատան արեւելեան հեռաւոր կղզիներու ու ծովեզերքներու վրայ , եւ իրենց յաղթական դրօշը կը ծածանի շատ նշանաւոր քաղաքներու մէջ , մօտն ու հեռուն : Իր անհամար նաւերն իր գոգը կը բերին թափելու աշխարհի հարստութիւնները : Իր նաւատորմիցը կը տիրէ Չուրբուռն վրայ միահեծան : Ամէնէն զօրաւոր իշխանները կը պատկառին իրմէ , եւ մեծ պատիւ կը համարին իր համակարմութիւնն ու հիւրընկալութիւնը վայելել : Արուեստները կը ծաղկին , կը բարգաւաճին անմասն յաղողութեամբ , եւ իր նկարչութիւնը , ճարտարպետութիւնը , քանդակագործութիւնը , ապակեգործութիւնն ալ աշխարհի հրացումը ու յարգանքը կը վայելեն . իր այրուեստագէտներն առաջին դիրքը կը գրաւեն գեղարուեստից պատմութեան մէջ : Վենետիկ իբրօք կ'ըլլայ դշտոյն եւ գոհարն Ադրիականի :

Քարերը կը հողովին , պարագաները կը փոփոխին , բայց աշխարհի ամէնէն յանկուցիչ . ամէնէն զիւթիչ ու վիպական վայրերէն մէկը պիտի մնայ միշտ Վենետիկ իր անցելոյն դիւցապետական պատմութեամբ , իր մեծափառ յիշատակարաններովն ու իր բնական եզական դիրքով :

ԵՐԵՔ ՏԱՐԻ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՄԷՋ

ՌՕՄԷՆ ՏՕՐԻՆԵԱՔԻ ՌԻՂԵՒՈՐԱԿԱՆ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Դ. ԳԼՈՒԽ

Փախուստէ վերջ. — Երկպառակութիւն. — Տօճենիօ կը սրդոյի Եփթորարայի հետ. — Դաշոյնները մտրկացած. — Օնօրիօյի միջամտութիւնը. — Երեք մարդ մեկանց գետինը. — Տօճենիօյի բարկութիւնը. — Եփթորարաւ իր ընկերները կեր՛ գիշակեր բազումներու. — Արկածներ հեղեղատի մը շուրջը. — Յանապտաբաստից քաջտող մը՝ որ գերզգամն մը կը դառնայ. — Օնօրիօ կը վիրաւորուի. — Տօճենիօյի միջամտութիւնը. — «Կօշօնները կը փախելին. — Ազատու. — Միշտ դէպի առաջ.

Առտուան ժամը չորսին մօտերն էր, Տասր վայրկեանն մը արշաւառոյր յառաջացած էինք՝ երբ Տօճենիօ պատուիրէց որ կենանք, Յետոյ, ձիէն իջնելով ականջը դետինին փակցուց, ու մտիկ ընելէ վերջ ըսաւ.

— Ութը կամ ասոր ձիաւորներ ինկած են ետեւնուս, բայց եթէ կարենանք Սալթօ տէլ Քառնէրօ հասնիլ, կ'ազատինք:

Կրկին ձի կենանք եւ սկսանք յառաջանալ կատաղի վազքով մը. միայն թէ, մեզ հաւածողները, լաւագոյն ձիեր ունենալուն՝ շարունակ տեղ կը շահէին մեր վրայ: Որտչ կերպով կը լսէինք իրենց ձիերուն դափրուտքը:

Վերջապէս Սալթօ տէլ Քառնէրօ հասանք. Հողը հող երկուքի բաժնուած էր հեզեղատէ մը՝ որուն վրայ երկու ծառի կոճղեր գրուած էին իբր կամուրջ: Օնօրիօ, Եփթորարա եւ իր երկու բարեկամները խելոյն սնցան այդ անարուեստ կամուրջին վրայէն: Եւ այ իրենց հետեւեցայ: Այդ միջոցին, մեզ հաւածողները բաւական յառաջացած ըլլալով հրացան կը պարպէին մեր վրայ: Քանի մը գնդակներ սուլեցին մեր շուրջը, բարեբաղդաբար առանց վնաս պատճառելու: Տօճենիօ ամենէն ետ մնացած էր: Տեսայ որ մէջքէն հանց շածծօն (երկար չուան մը՝ ծայրը բաց հանգոյցով) եւ ձին կամուրջին վրայէն վազցնելով հանդերձ, շածծօնն հանգոյցը անցցցց զայն կողմով երկու գերաններուն եւ հեղեղատին մէջ ձգեց զանանք: Քիչ մըն ալ յառաջացանք, հրա-

ցանի զնդակներէն ինքզինքնիս հետու պահելու համար, Երբոր կեցանք, շորհաւորեցի Տօճենիօն՝ իր ճարպիկ ընթացքին համար.

— Քուսն չի մեղքեար, ըսի իրեն, որովհետեւ պէտք եղածէն աւելի շահեկան պատահարներ սնցուցինք. բայց ինչ կ'ուզէիր հասկնիլ «ողջ մարդ մը պիտի թաղենք» ըսելով:

— Այս երկրին մէջ, պատասխանեց Տօճենիօ, «ողջ մարդ մը թաղել» կը նշանակէ խաղի մէջ շահիլ մարդու մը զրամը, առնը, գոյքերը, հազուապէս, եւ անոր թողուլ երկու ալքերը միայն՝ . . . որպէս զի ուզածին պէս լայ:

Շատ չկեցանք այդ տեղ. մեր հակառակորդները կրնային հեզեղատը դառնալով մեզի հասնիլ: Ծամբայ երանք նորէն, ամէնքս մէկ-միայն թէ, Տօճենիօ ան կը փափագէր լքել Եփթորարան, ինչպէս նաեւ անոր երկու ընկերները: Որովհետեւ Եփթորարա որ խաղի միջնորդ եղած էր պահ մը առաջ, իր բաժնիը կը պահանջէր: Ծամբան, կրկին ասոր խօսքը բացուեցաւ: Եփթորարա առաջարկեց որ Տօճենիօյի շահած զրամը բաշխուի հուսասարկերպով, բայց Հնդիկը ընդդիմացաւ: Քիչ առ քիչ սկսան վիճաբանիլ, ուրիշ վերջ Եփթորարա եւ իր երկու ընկերները յարձակեցան Տօճենիօյի վրայ: Իսկոյն առաջ նետուեցայ, կուռին միջամտելու համար, բայց հազուապէս մը քայլ առած էր, երբ շածծօն մը հանգոյցը գրկեց երեք մարդիկը մէկուանց: Օնօրիօն էր՝ որ իր հայրը ազատած էր երեք հակառակորդներէն, ու ձին առաջ քշելով կը քաշկուտէր երեքը մէկանց, գետնի քարերուն վրայէն: Օնօրիօ, հօրը միջամտութեան վրայ միայն ձիուս վազքը դադարեցուց, եւ Եփթորարա ու իր երկու ընկերները ազատեցան ապահով մահէ մը: Յետոյ, միշտ հօրը հրամանին վրայ, երեքը մէկ ամուր մը կա-

պեց : Այդ միջոցին Տօմէնիօ քաչեց դաշոյնը եւ Շիքօքարայի մօտեցաւ : Հասկցայ իսկոյն թէ մարդուն վիզը պիտի կտրէր , բան մը որ կողմէս դպաւ , եւ զիս դրօշեց որ միջամտեմ : Հնդիկը չախորժեցաւ իմ ընթացքէս եւ զէնքը ինծի դարձուց :

— Լա՛ւ , ըսի , սպաննէ զիս , դուն որ խոտացած էիր իբր հայր միայն վարուիլ ինծի հետ . բայց մի՛ կատարեր այդ սպանու- թիւնը որ պարպապէս չի վայլեր քեզի պէս քաջ ու վեհանմն մարդու մը :

Ճիշդ տեղին դպած էի : Հնդիկը կակկեցաւ եւ որաշոյնը պահեց : Միայն թէ թող չտուաւ որ երեք մարդոց կապերը քակուին :

— Դանակս չպիտի պղծեմ ձեր շան արև- նով , ըսաւ անոնց . ձեր մարմինը հոս նուէր կը թողում անգղերուն եւ ակոյաքաններուն (դաշտային գայլ) : Համբերեցէ՛ք , աչքերնիդ երկար առեն չպիտի մնան ձեր անիծեալ գանկին վրայ :

Յետոյ առինք այդ մարդոց ձիերը եւ նուրէն ճարմայ իրկանք : Այդ միջոցին արգէն իսկ ճազմաբնիկները թռչուններու սկսած էին ինչն զէպի Շիքօքարայի եւ իր երկու ընկերներուն գտնուած կողմը : Մինչեւ ցորեկ այդպէս յառաջանալով Ծօթօնուի մօտերը հասանք՝ եւ ճաշի նստանք : Տօմէնիօ որսի ելաւ , բայց երէնները տակաւին չխորոված լսեցինք որ ձիաւորներու խումը մը կու գայ մեր կողմը :

Տօմէնիօ մտիկ ըրաւ :

— Անուազն տասներհինգ հոգի մը կան , ըսաւ քիչ ետքը . անպիտանները կ'երեսայ թէ օգնականներ . առած են իրենց : Մոռնում- թիւնը կը տահանջէ որ առանց ժամանակ կորսեցնելու լսեւ ելլենք :

Իսկոյն ձիերնուս վրայ ցատկեցինք եւ խոյսցանք առաջ , առանց զետեղէն բաժնուելու : Վերջապէս Տօմէնիօ հուն մը գտաւ ուրկէ դիտեց անցնելու սիւրճ մը ըրինք , բայց զուր տեղը , որովհետեւ մեր ձիերը կը սանկէին ամէն մէկ քայլին ու չէին կրնար յառաջանալ , Բաւական ժամանակ կորսնցուցինք այդ տեղ , առանց ո՛ր եւ է արդիւնք մը ձեռք բերելու : Միւր հակառակորդները մեզի հասնելու մօտ էին . որոշակի կը լսէինք

իրենց ձիերուն վրնջիւնը : Վերջապէս ստիպուեցանք ձիերը թողուլ որ ըստ բարդի լուրն հոսանք ի վար , ու ցամաք ելլեն իրենք իրենց : Ձիերը իջնի վար , ու քիչ ետքը , իրենցմէ մէկուն վրնջիւնէն Օնօրիօ հետեւացուց թէ կրցած էին հոսանքէն ազատիլ ու ցամաք ելլել : Այդ միջոցին , որովհետեւ հեռունալու ժամանակ չուէինք , ծովագերքին վրայ , մացառուաներու մէջ բացուած խոր ծակի մը մէջ պտուռտեցանք : Տօմէնիօ միայն դուրսը մնաց , եւ ճիշդ այն վայրկեանին ուր մեր հակառակորդները գետին միւս եւ գերքը կը հասնէին , նետուեցաւ ջուրը : Հրացանի քանի մը հարուածներ մէկանց արձակուեցան , ու սեռանք որ մարմինի նմանող բան մը կը ծփայ ջուրին երեսը , ու կը սահի վար՝ հոսանքին հետ : Օնօրիօ խնդալով բացատրեց ինծի թէ ի՛նչ է ստիկա : Տօմէնիօ՛ ջուրը նետուած միջոցին հետը առած էր նաեւ միւր կապոցներէն մէկը : Կապոցը քնականաբար ջուրին երեսը մնացած էր , իսկ ինքը տակը : Միւր հակառակորդները՝ անանկ կարծած էին թէ այդ կապոցը մարդ սըն է , եւ հրացաննաճգութենէն վերջ սեռնելով որ կը ծփայ ջուրին երեսը՝ հետեւեցուցած էին թէ մեզմէ մէկը սպաննուած է իրենց զնդակներէն :

Օնօրիօ այսպէս մեկնեց իրողութիւնը : Ինչ ետքը ես ինքս համոզուեցայ ատոր : Մեր հակառակորդները որունք գետին միւս եզրը հասած էին , կը վիճէին իրարու հետ՝ ճշդիւս համար թէ որո՛ւ կ'իյնայ այդ սպանութեան պատիւը : Ամէն մարդ կ'ըսէր թէ իր գնդակով սպաննուած է : Վերջապէս իրենց պեսը ստիպուեցաւ միջամտելու :

— Բարեկամներ , ըսաւ , հանդարտեցէ՛ք , սխալքը ամէնուզ ալ կը պատկանի : Չմտնանք որ ասոնք երեք հոգի էին , եւ թէ երկու հոգի ալ կը մնան տակաւին :

Տօմէնիօ մէջտեղ չկտր . չէինք զիտեր թէ ի՛նչ եղած էր : Մեր թաքստոցէն կը դիտէինք դիմացի կեղերը խնձուած այդ կատաղի մարդոց շարժումները : Տարակոյտ չկար որ ջուրէն անցնելէն անմիջապէս վերջ պիտի տե՛ն . . . Անհաւատար կոխ մը պիտի ըլլար

մեր մղելիքը Պահ մը ետք արդէն իսկ հասկցած էին թէ ո՛ւր կը գտնուէինք : Մեկզմէկու ցոյց կուտային մեր թաքստոցը :

Յանկարծ , իրենցմէ մէկը պոռայ մեզի .

— Ո՛ւր որ կը գտնուիք , երեւան ելէք . կամ անձնատուր ելէք եւ կամ կը մեռցնենք զձեզ :

Աւելորդ է ըսել թէ տեղերնուս չէինք շարժեր անգամ : Մեր պահած լուսթիւնը ա՛լ աւելի կասողեցուց զիրենք , եւ հրացանի քանի մը գնդակներ արձակուեցան զէպի մեր կողմը : Անոնցմէ մէկը մտնուանց ճիշդ ձեռքիս մտնէն անցաւ :

Օտորիօ յիշոց մը արձակեց :

— Զգուշու՛թի՛ւն , պոռայ յանկարծ , անպիտանները զգացեր են թէ ո՛ւր կը գրաս նուրիք . . . :

Ժամանակ չունեցաւ իոսքը աւարտելու : Նոր հրացանաձգութիւն մը ծայր տուաւ գետին միւս կողմէն : Կացութիւնը կը կնճռուէր : Մեր գտնուած տեղը ո՛չ թէ միայն գէշ պատասխարան մըն էր , այլ նաեւ նոնկէ անկարելի էր ինքնապաշտպանութեան ո՛ր եւ է փորձ ընել : Պիտի ստիպուէինք մեզին , առանց մեր թնամիներուն բան մը բրած ըլլալու : Եւ արդէն հրացանս ալ Տօմէնոյի քօնէ էր : Շատ չանցած՝ երկորդ հրացանաձգութեան շարժուցեց երրորդ մը , որու միջոցին Օտորիօ բազուկէն վիրաբուռեցաւ , թէեւ շատ թնթեւ կերպով : Յուսահատած էինք : Ազատու մ չկար : Երկուքիս համար ալ մահուան վրայ մտածելու ժամը հասած էր :

Յանկարծ աղմուկ մը լսեցինք մեր զըլխուն վրայ . հրացան մը արձակուեցաւ մեր թաքստոցին կատարէն , եւ ցաւի աղաղակ մը լսուեցաւ գետին միւս կողմէն : Քիչ ետքը Տօմէնիօ յանկարծական յայտնութիւն մը բրավ , ու մեզի օգնոց որ դուրս ելլենք այդ անկ ծակէն , ճիշդ ատենին հասած էր , իսկոյն հետացանք գետեզրէն եւ գացինք պատասխարուիլ հողոյտոյտի մը ետին : Օտորիօ այդ միջոցին գինքը վիրաբուռով մարդ տեսնելով , հօրը ձեռքէն առաւ հրացանը , եւ գետեզրը իջաւ որպէս զի զայն սպաննէ , բայց իսկոյն ետ դարձաւ ըսելով .

— Անկէքն ալ փախեր են :

— Անկարելի է , պոռայի , իրենք տասնըհինգ հոգի , մեք երեք , ինչպէ՞ս կը փախին :

— Ապահովարար օգնական փնտաւելու գացած են , ըսաւ Տօմէնիօ :

Անմիջապէս հողի բարձունքին կատարը ելանք , ու տեսնեք որ կօշօնեքը (այս տունուր կու տան զաջայային ընակիչներուն) իրապէս կճկիլը կը դնեն , եւ կանգնուան չափ շուտ : Ասիկա ձեզի կրնայ լաւ գաղափար մը տայ այդ պատուական կօշօներուն քաջատրտութեան վրայ :

Օտորիօյ վէրքը վտանգաւոր բան մը չէր : Դացինք գտանք մեր ձիրը՝ որոնք հետուն՝ կարծես կու լինէն ելքին կը սպասէին , նոյն ատեն աղուոր հանգրստ մը վայելելով : Ծամբայ կ'անք նորէն , հետզհետէ կուսլի գտուարանցանելի տեղերէ անցնելով : Երրորդ գիշերը վրայ հասաւ , ինտերանտանիշա ամբողջին մօտերը հասած էինք : Տօմէնիօ առաջարկեց որ հանգրստ ատենք հոն , բայց արդիւնց կրակ վտանգ :

— Ամրոցէն կրնան մեզ տեսնել , ըսաւ , եւ նեղութիւն պատճառել :

Գիշերը շատ հանդարտ անցուցինք : Մինչեւ լոյս կռիւ միայն երազեցի :

(Շարունակելի)

ՅՈՒՐՆԱՆԵՐ

Ամեն Տ. Մաղախա Ս. Պատրիարք՝ իր անուան անտարմուխեանը արթիւ՛ երեքշաբթի օրը առաւօտէն մինչեւ իրիկուն շնորհաւորական այցելութիւններ ընդունեց , ինչպէս նաեւ բազմաթիւ հեռագիրներ գտուաներէն եւ արտասանմանէ : Դատական եւ կրօնական գործոց նախարարութեան կողմէն : Սրբազնութեան այցելեց Սէրմէզ պէյ , Նոյնպէս , կրօն եւ Քաղ. Ժողովներու անդամները , Տեսուչ եւ Թաղ. Խորհուրդներու , Հագագարձութեանց , Խնամակալութեանց ներկայացուցիչներ , Պատրիարքարանի պայտօնէսութիւնը խմբովին , Երուսաղէմի Պատր. Փոխարինող Երէցեան Տ. Կէրօք Սրբազան , Դըպութեանքի վերատեսուչ Դուռնին Սրբազան , Պրուսայի առաջնորդ Արչարաւունի Սրբազան , քարոզիչներ , աւագերէցներ , զանազան դասակարգերու պառկանոց ծանօթ անձնաւորութիւններ , եւ մամուլի ներկայացուցիչներ : Ընտրութեան այցելութիւն տուին նաեւ Յունաց Պատրիարքական Փոխարինողը , Հայ Հռոմէականաց Պատրիարքարանին կողմէ Մէրտինի Գերապայտաւոր եւ Անտոնեան Միտանուն թեան կողմէ Հ. Դանիէլ վրդ . Միտաւերեան , Երուսաղէմի Ս. Պատրիարքը հեռագրաւ շնորհաւորած է Օրմանեան Ս. Պատրիարքին անուան ընտրութեան ժամերը :

Արեւելեան Մամուլի վերջին թիւին մէջ Արժանիքի ուրացումն վերնադրով նամակ մը հրատարակած է Մետրոպոլիտանի, քաղաքացիական Ազգաբանակի Փանոսեանի անունին յիշուելուն դէմ՝ ժամանակակից հայ բանաստեղծներու շարքին մէջ, նոյն կիսամեայ Հանդէսի նախորդ թիւով հրատարակուած Բնեւորատականին մէջ որուն հեղինակը, Արտաշէս Յարութիւնեան, հիտերէն ու նորերէն, մեռածներէն ու կենդանիներէն ո՛չ մէկը յիշատակելու չէր մտայած սակայն :

«Մարկարացի ուսումնականը, — կը գրէ Տրանսպոնի Բազիլըքին հեղինակը — զանց կընէ, չհիշեր անգամ Ազգաբանակի Փանոսեանի (Ալփայան) նման նշանուոր արտիստն մը որ քան տարիէ հետէ հայ բանաստեղծութեան ասպարէզին վրայ կը թեւածէ, յանգաւոր գրականութեան սեպէ թէ ամէն ինչ զինն այ մեծ ու մերթ անորինակ յաջողակութեամբ մը մշակելով, մանկական, քնարերգական, սիրային, երգիծական, նկարարական եւ անակական զերթուածներու փոփոխ ու հրաշալի պէսպարութիւնով մը որ հազարաւոր գնահատողներ ունի Պոլսէ սկսեալ մինչեւ յետին զաւառը ուր արդ թերթ մը կամ օրացոյց մը կը հանին, Հայ կուսակցութեան կարգաւ ու դարձորաձիկ օտարերով յօրինուածքը որուն՝ կարծենք՝ ինք Փանոսեան սկիզբ ըրած է, թերեւս մէկէ աւելի հայ բանաստեղծներու ծառայած է իր օրինակն :

Կատարելապէս համարիտ Մետրոպոլիտանի այս եւ յաջորդ առողերուն, եւ իրեն համակրող մեծ գնահատող մը Ազգաբանոսեանի քանաստեղծական տաղանդին — որուն փառուն արտադրութիւնները Մասիսի մէջ ալ հիւրընկալելու հաճոյքը ունեցած ենք — կը զմայնք որ ինքզինքը անաչառ ու անկողնակալ քննադատ ձեւորող գրիչ մը, քանակաբար քանակութեան մէջ արժանութեամբ ու կրկին կրկին սրբազրութեամբ արտադրուած խանութքը օտանակարներու հատորիկ մը պանծացնելու եւ խնկարկելու վերացումին մէջ՝ մոռնալ կը ձեւացնէ զայտիճիչը Փանոսեանին որ միակ աարուան մը մէջ անոնց չափ ու անուսմէ գերազանցապէս զեղեցիկ զերթուածները գրած է :

«Տիեզերք եւ իր կազմութիւնը» — Տօքթ. Ն. Տաղաւարեանի այս երկատրութիւնը, որ Կիտական Կաճաթի մը առջեւ սրբատառուած երեք քանդակաւոր հատոր ամբողջութիւն մըն է եւ Ֆրանսերէն կտար մը եր կազմէ, հայերէնի թարգմանուած ըլլալով Արմաշի Դպրեւանքին նախկին սաներէն Սահակ Կրք :

Օտապաշահանի կողմէ, — այժմ տապան փոխանորդ Մետրոպոլիտանի, — հեղինակին ձօնուած է : Տօքթ. Տաղաւարեան փափագելով որ այս նուէրէն նպաստաւորութի իր ծննդավայրը, Արեւատիս, որ թարգմանիկն ալ ծննդավայրն է, տպագրել տալով զայն իր ծախքով, հասոյթը յատկացուցած է Մետրոպոլիտանին : Պատկերազարդ գեղեցիկ հատոր մը կը կազմէ Տիեզերք եւ իր կազմութիւնը, որուն ընթերցումը մեծապէս կրնայ նուազաբար զիտուելեան սիրահար միտքերը : Գին 10 զրչ : Վաճառման կեդրոնատեղի՝ Հիւանդանոցի արհեստանոցին սենեակը :

Ս Ա Ն Ա Ս Ա Ր Ե Ա Ն Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն
ԻՔ. Տարեթան 1902-1903

Վարժարանի ԻՔ. տարեթանը կը սկսի յառաջիկայ (1902) սեպտեմբեր 1ին : Նորիկ աշակերտաց մուտքի քննութիւնները տեղի կ'ունենան օգոստոս 30ին եւ 31ին, իւր գաւառները կանոնաւորապէս կը սկսին սեպտեմբեր 2ին, Իշ, օր

Թոշակաւոր գրչերթիկ աշակերտաց ընդունելութեան համար վարժարանն ունի երկու տեսակ պայման. — Պէտք է վճարել :

Ա. Միանուագ մուտք՝ 3 օսմ. ոսկի : Տարեթոշակ 20 օսմ. ոսկի : Արձակուրդի տուրք 1 օսմ. ոսկի : Բոլոր ծախքերը վարժարանին վրայ են :

Բ. Անսով մուտքի, 12 օսմ. ոսկի տարեթոշակ եւ 1 օսկի արձակուրդի տուրք, պայմանաւ սակայն որ աշակերտաց ծնողք հոգին իրենց զուտկաց զգեստի, կոյնիկի, կարկառանքի, դասագրքի եւ դպրոցական այլ պիտոյից, մահճակալի եւ անկողնոց, ինչպէս նաեւ գեղարեւիք ծախքը, իւր վարժարանն կու տայ սնունդ, ուսում եւ կը հոգայ լուսացքի, բերքիկի եւ այլ ծախքերը :

Յերիկեալ թոշակաւորները պարսին վճարել 6 օսմ. ոսկի :

Մանրամասն տեղեկութեանց համար, ծնողք կամ պապայապքը կրնան զիմել Կ. Պոլսու, Պատրիարքարանը, կամ Կարին, վարժարանն տեսութեան : — Յուսակիցայ տարի նոր ձրիավարժներ չպիտի ընդունուին. այդ մասին տեղի ունենալիքն ո՛ր եւ է դիմում առանց հետեւանքի պիտի մնայ :

Կարին Տնտեսիկն Սահասարեան Վարժարանի

Արժանատի Կ. Ս. Ինթիլիճեան

Յպագրութիւն Ե. ՄԱՏԵ ԷՍՍԵԱՆ
Կ. Պոլս, Յինաներար եօղաւ, Թիւ 27